**Հավելված 2**
**Ակունք համայնքի ղեկավարի 26 մայիսի**
**2025թվականի թիվ 500-Լ որոշման**

**Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ՝ Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար**

**1. Թափուր պաշտոնի անվանումը՛**

**Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի (ծածկագիր 2.3-2)**

**Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները**

-Գլխավոր մասնագետը՝ հանդիսանում է տնտեսական զարգացման պատասխանատու, համայնքապետարանի կայքի վարման պատասխանատուն.
- աջակցել համայնքապետին մշակելու տեղական տնտեսական զարգասման պլանը՝ տեղական ինքնակառավարման մարմինների,մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության դերակատարների հետ համատեղ:
-Համապատասխանեցնել տեղական տնտեսական զարգացման պլանն առկա այլ փաստաթղթերի հետ, ներառյալ՝ մշակված ռազմավարություններ, ծրագրեր և մասնավոր հատվածի պլաններ:
-իրականացնել տեղական տնտեսական վերլուծություններ հետևյալ թեմաների շրջանակներում՝ տեղական համագործակցություն, ֆինանսների հասանելիություն, տնտեսության կառուցվածք, ենթակառուցվածքներ և ընթացակարգեր, մարդկային կապիտալ, արտաքին դիրքավորում և մարքեթինգ:
-նպաստել տնտեսական զարգացման ընդհանուր տեսլականի և նպատակների ձևակերպմանը, ինչպես նաև գործողությունների ու նախագծերի սահմանմանը:

**Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը**

- ունի համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ վարչական կամ հայեցողական կամ ինքնավար պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ: :

Մրցույթը կկայանա 03 հուլիսի 2025թ. ժամը 11$^{\underline{00}}$ –ին Ակունքի համայնքապետարանի շենքում ,հասցեն’ ՀՀ Կոտայքի մարզ Ակունք համայնք (գ. Ակունք, հեռ. 077-870825):
Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 18 հունիսի 2025թ.
Դիմող ՀՀ քաղաքացիները և փախստականի կարգավիճակ ունեցող անձինք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

*դիմում մրցութային հանձնաժողովի անունով( լրացվում է փաստաթղթեր ներկայացնելիս)
*տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջներ բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմների, վկայականների, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին
*արական սեռի անձինք նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին
*մեկ լուսանկար 3x4 չափսի
*անձնագրի պատճենը

Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ Կոտայքի մարզի Ակունքի համայնքի աշխատակազմում ժամը 10$^{\underline{00}}$ - ից մինչև 17$^{\underline{00}}$ -ը, կամ ք. Հրազդան Կենտրոն վարչական շենք, Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչությունում: ՏԻ և ՀԾՀ բաժնի հեռ. 0223 2-34-13, ժամը 10$^{\underline{00}}$ -ից մինչև 17$^{\underline{00}}$ , բացի շաբաթ և կիրակի օրերից: